ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. դեկտեմբերի 15-ից 17-ը Բելգիայի Թագավորություն (Բրյուսել)՝ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Իրինա Ղափլանյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Իրինա Ղափլանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Բելգիայի Թագավորություն (Բրյուսել)

   2019թ. դեկտեմբերի 15-ից 17-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Եվրամիություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն՝ ՀՀ-ԵՄ Գործընկերության կոմիտեի երկրորդ հանդիպմանը:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

2019թ. դեկտեմբերի 16-ին Բրյուսելում տեղի ունեցավ «ՀՀ-ԵՄ Գործընկերության կոմիտեի երկրորդ հանդիպումը: Բարձրաստիճան հատվածի հանդիպմանը մասնակցելու և ելույթներով հանդես գալու համար հրավիրված էին կոմիտեի կողմ երկրների շրջակա միջավայրի ոլորտի բարձրաստիճան ներկայացուցիչները:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը.

- ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի Ճանապարհային քարտեզիմիջոցառումների իրականացման առաջընթացը,
- Տնտեսական զարգացում,
- Արևելյան գործընկերություն,
- Տարածաշրջանային խնդիրներ,

- և այլն.

«2. ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի Ճանապարհային քարտեզի միջոցառումների իրականացման առաջընթացը» կետի շրջանակներում՝ համաձայն օրակարգի նախատեսված էր «2.2.4. Բնապահպանություն և Կլիմա» ենթակետը, որի վերաբերյալ ներկայացրեցի միջավայրի նախարարության կողմից մեկնարկել են ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի Ճանապարհային քարտեզի Բնապահպանություն և Կլիմայի փոփոխություն գլուխների միջոցառումների իրականացման աշխատանքները:

Զեկույցի (կցվում է) ընթացքում ներկայացրեցի առանձին ոլորտների մասով իրականացված և իրականացվելիք աշխատանքների մասին՝ համաձայն ճանապարհային քարտեզում դրանց ունեցած հերթականության: Մասնավորապես անդրադարձա՝ շրջակա միջավայրի կառավարման, օդի որակի, ջրի որակի և բնական պաշարների կառավարման, թափոնների կառավարման, կենսաբազմազանության պահպանության, արդյունաբերական աղտոտման և արդյունաբերական վտանգների, կլիմայի փոփոխության, ինչպես նաև քիմիական նյութերի կառավարման ոլորտներում ԵՄ համապատասխան հրահանգներին ազգային օրենսդրության մոտարկման աշխատանքներին և իրականացված միջոցառումներին:

Անդրադարձ կատարեցի, մասնավորապես՝

- Շրջակա միջավայրի վրա որոշակի պետական և մասնավոր ծրագրերի ազդեցության մասին» 2011/92/ ԵՄ հրահանգի ազգային օրենսդրության մոտարկման աշխատանքներին,
- Շրջակա միջավայրի վրա որոշակի նախագծերի և ծրագրերի ազդեցության գնահատման մասին 2001/42/ԵՀ հրահանգին համապատասխան ազգային օրենսդրության մոտարկման աշխատանքներին,
- Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հանրային հասանելիության մասին 2003/4/ԵՀ հրահանգի ազգային օրենսդրության մոտարկման աշխատանքներին,
- «Էկոհարթակ» բնապահպանական տեղեկատվական հեռուստանախագծին,
- Շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման և վերականգնման մասով բնապահպանական պատասխանատվության մասին 2004/35/ԵՀ հրահանգի ազգային օրենսդրության մոտարկման աշխատանքներին,
- Եվրոպայի համար մթնոլորտային օդիորակի և ավելի մաքուր օդի մասին 2008/50/ԵՀ հրահանգի ազգային օրենսդրության մոտարկման աշխատանքներին,

- Ջրային քաղաքականության ոլորտում Համայնքի գործողությունների շրջանակը սահմանող՝ 23-ի 2000/60/ԵՀ հրահանգի ազգային օրենսդրության մոտարկման աշխատանքներին,
- Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին 91/271/ԵՏՀ հրահանգի ազգային օրենսդրության մոտարկման աշխատանքներին,
- Վայրի թռչունների պահպանության մասին 2009/147/ԵՀ և Բնական միջավայրերի և կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակների պահպանության մասին 92/43/ԵՏՀ հրահանգների ազգային օրենսդրության մոտարկման աշխատանքներին,
- ԵՄ «Ջրային նախաձեռնություն պլյուս» ծրագրի հետ համագործակցությամբ իրականացվող աշխատանքներին:
- Ներկայացրեցի նաև մեկ տարվա ընթացքում սահմանվող փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար ագելված գետերի ցանկը, ինչպես նաև մշակման փուլում գտնվող Սևանի և Հրազդանի ջրավազանային կառավարման պլաններում իրականացվող աշխատանքները:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Իրինա Ղափլանյան